ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1960 Общественные науки

Է. Վ. Խանզադյան

ԼՃԱՇԵՆԻ № 6 ԿՈՒՐԳԱՆԸ

Սևանի ավազանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում իր բազմապիսի և բազմաթիվ պատմական հուշարձաններով։

Երկար տարիներ է, որ մեր գիտնականներն զբաղվում են այդ հուշարձանների ուսումնասիրությամբ, սակայն ջրի տակ եղած հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը սկսվել է վերջին տարիներս՝ լճի իջեցման կապակցությամբ, որի հետևանքով չորացած տարածության վրա բացվել են հնագույն շրջանին պատկանող բազմաթիվ հուշարձաններ՝ բնակատեղիների ավերակներ և դամբարաններ։

Շուրջ երկու տարի է (1956—1957), ինչ Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմական թանգարանի հնագիտական արշավախումբը Հ. Հ. Մնացականյանի ղեկավարությամբ պեղումներ է կատարում Լճաշեն գյուղում (նախկին Օրդակլու), Սևանա լճի հյուսիս-արևմտյան կողմում՝ ցամաքած տարածության վրա բացված տարբեր ժամանակաշրջանի պատկանող կրոմլեխներով և կուրգաններով հարուստ ընդարձակ դամբարանադաշտում։

Մինչ այժմ պեղված ինը կուրգանների մեջ, ինչպես իր կառուցման ձևով, այնպես էլ ինվենտարով, ուրույն տեղ է գրավում 1957 թ. պեղված № 6 կուրգանը, որի ուսումնասիրությանն է նվիրված այս հոդվածը։ Այն, ինչպես իր գրաված դիրքով, այնպես էլ իր արտաքին տեսքով ոչնչով չէր տարբերվում դամբարանադաշտում գտնվող մյուս կուրգաններից։ Ծածկված էր 0,60—0,80 սմ բարձրություն և 4—5,5 մ տրամագիծ ունեցող միջակ մեծության քարերի կույտով և ուներ էլիպսի ձև։

Քարերը և փափուկ հողը հեռացնելուց հետո պարզվեց, որ թաղումը կատարված է 2,7 մ խորության վրա, ուղղակի հողի կտրվածքի մեջ, դեղնագույն կավային շերտում (հակառակ Լճաշենի մյուս կուրգանների, որտեղ դամբարանը կառուցված էր հսկա ժայռարեկորներով և վերևից էլ ծածկված նույնատիպ քարերով)։

Կուրգանում ծածկի գերանների կամ ծածկը պահող սյուների հետքեր չգտնվեցին (սակայն նույն էպոխայի մի շարք կուրգաններում պահպանվել են փայտի մնացորդները, ծածկը պահող սյուները՝ Կիրովականում[1], նաև ծածկի կաղնու գերաններ՝ Թրիալեթում՝ Բիյուկ-Թեփեի կուրգանում)[2]։ Հավանաբար այս կուրգանը հատուկ ծածկ չի ունեցել։ Թաղումից հետո փոսը լցրել են հողով և վրան քարերի կույտ առաջացրել։

Դամբարանը՝ կլորացրած անկյուններով ուղղանկյուն քառանկյան ձև ուներ։ Ուղղությունը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք էր։ Հյուսիսային

---

[1] Дневник Б. Б. Пиотровского.

[2] Б. А. Куфтин. „Археологические раскопки в Триалети", Тбилиси, 1941, стр. 81.

կողմում ուներ աստիճանաձև իջվածք, որը հավանաբար մուտքն է եղել։ (նկ. № 1)։



Նկ. 1.

Կարճ՝ արևելյան և արևմտյան կողմերի երկարությունը 2,5 մ էր, իսկ երկար՝ հյուսիսային և հարավային կողմերինը՝ 4,5 մ։

Պեղման ժամանակ հայտնաբերված բոլոր իրերը տասնհինգ մեծ և փոքր տարբեր չափերի ու ձևերի կավամանները, օբսիդաքարե փոքրիկ նուկլեուսը և քերծը, այծի գանգն ու կմախքը, երկու եզների գանգերը և ոտքերի վերջավորությունները, եզան ջարդոտված կողոսկրները, բոլորն էլ դրված էին ուղղակի հարթ դետնի վրա։

Մարդկային կմախք, մետաղե իրեր, ղենքեր և զարդեր չկային։ Արևելյան կողմի երկու անկյուններում դրված էին եզների գանգերը՝ դեմքերով դեպի

արևելք և ոտքերի վերջավորությունները (սրունքը, սմրակը և թաթի ոսկրները)։

Կողոսկրների մի մասը հարավային պատի մոտ դրված գունավարդ կարասի կողքին էին, մյուս մասը հյուսիսային պատի կենտրոնում, գունազարդ, ուռած փորով կճուճների մոտ։ Կողոսկրները ջարդված էին, բայց դրված՝ առանց դասավորությունը խախտելու (նկ. №1)։

Դամբարանում հայտնաբերվեցին գունավարդ և հասարակ գորշագույն կավամաններ։

Գունավարդ կավամանները երկու խմբով դրված էին դամբարանի կենտրոնից դեպի արևելք։ Մի խումբը հարավային պատի տակ, մյուսը՝ հյուսիսային պատի երկարությամբ՝ պատի համարյա կենտրոնական մասում։ Գորշագույն հասարակ կավամանները դրված էին դամբարանի տարբեր մասերում։

Կենտրոնում՝ այծի գանգի և կմախքի միջև տեղավորված էին նուրբ, երկկանթանի բիկոնաձև սև փարջը՝ բերանբսիվայր շրջված, գորշագույն լայնաբերան կավամանը և ալամանի տիպի փոքրիկ պնակ, որի կողքին ընկած էին օբսիդաբարե փոքրիկ նուկլեուսը և քերծը։

Բոլոր կավամանները պատրաստված են ձեռքով, անկանթ են (բացի սև փարչից), ունեն տափակ հատակ և բոլորն էլ ունեն մրից սևացած և կրակից շիկացած տեղեր (բացի երկկանթանի փարչից)։

Կուրգանում գտնված կավամաններն իրարից տարբերվում են ինչպես գույնով, այնպես էլ ձևով, մեծությամբ, որակով։

Գունավարդ կավամանները պատրաստված են բաց վարդագույն, լավ մշակված և լավ թրծված կավից (բացի № 2 կճուճից, որը պատրաստված է գորշագույն վատ մշակված կավից)։

Ըստ ձևի երեք տեսակ են

1. Կարաս՝ ոչ մեծ.

2. Անվիզ կճուճներ, լայնաբերան, գնդաձև՝ լավ արտահայտված պսակով

3. Քրեղան՝ խորը։

Բոլոր կավամանները թե՛ շուրթի ներսից և թե՛ արտաքին մակերեսից, ծածկված են վառ կարմիր անգոբով, որն իր թարմությունը պահպանել է որոշ կճուճների վրա։ Նրանք ունեն նույնանման զարդանախշեր, որոնք սկսվելով շուրթից, ավարտվում են իրանի ամենալայն մասում (նկ. 2)։

Շուրթի և վզի վրա առված է կճուճին ուղղահայաց չորս սև գծերից բաղկացած խմբեր (մեկի վրա պահպանվել է վեց խումբ), որոնք դասավորված են անհամաչափ, իրարից տարբեր հեռավորության վրա։ Վզի հիմքում արված են չորս սև համակենտրոն հորիզոնական գծեր, որից սկսվում է քառագիծ ռոմբերի շարքերը, որոնց թիվը 1—3-ն է (նկ. 3)։

Նույնատիպ գունազարդ կճուճների մենք հանդիպում ենք վաղ բրոնզի շրջանի մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսերին 17—16-րդ դդ. ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի և Ադրբեջանի կուրգաններում ու բնակատեղիներում։

Բավականին տարածված զարդանախշեր են ինչպես վզի հիմքում համակենտրոն ալիքների կամ հորիզոնական գծերի զարդանախշերը, այնպես էլ շուրթերի և վզի վրայի չորսական ուղղահայաց գծերից բաղկացած խմբերը։

Այն մենք տեսնում ենք Կիրովականի, Աղավնատան, Էլարի, Նոր Բայազետի, Թրիալեթի, Ջուանբատի կճուճների վրա, նաև Հայաստանի ու Ադրբեջանի

Նկ. 2.

ինակատեղիներից՝ Մուխաննաթ-Թափայի, Գառնիի, Ուզերլիկ-Թեփեի գունազարդ խեցեղենի վրա։

Մեծ տարածում ունեն նաև քառագիծ ռոմբերի զարդանախշերը։ Զուգահեռ գծերով ծածկված ռոմբաձև զարդանախշերն սկիզբ են առել դեռևս էնեոլիթյան կուլտուրայում։ Դրա օրինակները մենք տեսնում ենք Կառնուտի (Նախկին Դիրաբլար) և Թագավորանիստի (Կիրովական) սև փայլեցված կճուճների բեկորների վրա։ Սակայն նրանք ոչ թե նկարուն են, ինչպես վերոհիշյալ կճուճների վրայի ռոմբերը, այլ փորագիր ակոսների ձևով են արված։ Այս զարդանախշը լայն տարածում է ստանում հատկապես վաղ բրոնզի շրջանում։

Նկ. 3.

Նկ. 4.

Քառադիծ ռոմբերի զարդանախշով, բայց այլ դասավորությամբ գունազարդ կճուճներ և խորը թասեր գտնվել են Բասարդեչարի շրջանի Կարճաղբյուր (նախկին Գյոդակ-Բուլաղ) գյուղում, (Երևանի Պետ. պատմական թանգարան, ինվ. № 1559, նկ. 4, ձեռք է բերվել աղատադրական արշավախմբի միջոցով 1938 թվականին), Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղի Քաղաց-բլուրի մոտ, (ինվ. № 1114։ Ձեռք է բերվել Մ. Հասրաթյանի միջոցով և Ստ. Լիսիցյանի 1932 թվականի արշավախմբի միջոցով, Կոտայքի շրջանի Գառնի գյուղի արևմտյան մասում, Արտաշատի ճանապարհի եզրին 1956 թվականի բացված դամբարանում, նկ. 5)։

Նկ. 5

Որ զարդանախշերով Լճաշենի գունազարդ կճուճներն է հիշեցնում Էջմիածնի թանգարանից բերված 556/4 ռոմբաձև զարդանախշով կճուճը, որը կրկնում է Լճաշենի զարդանկարի ամբողջ կոմպոզիցիան (նկ. 6)։

Լճաշենի № 5 կճուճի (նկ. 3) կրկնօրինակ կարելի է համարել Թաղաքենդում Պ. Վ. Զարկովսկու պեղած № 1 կուրգանի գունազարդ կճուճը (№ 1)։ Այն Լճաշենի կճուճին նման է ոչ միայն արտաքին ձևով, այլև զարդանկարի ողջ կոմպոզիցիայով։ Բացի այդ, մեծ նմանություն կա և՛ թաղման ձևի, և՛ կուրգանի կառուցվածքի մեջ։ Թաղաքենդի այս կուրգանում ևս թաղումը կատարված է ուղղակի հողի կտրվածքի մեջ, քառանկյունաձև փոսում, առանց քարե պատերի։ Դամբարանում գտնվել են միայն չորս գունազարդ կճուճներ, որոնք իրարից տարբերվում են և՛ ձևով, և՛ զարդանախշերով։ Երկարավուն են, երկար վզով, հակառակ քառագիծ ռոմբաձև կավամանի, որը լայնարերան է, լայնափոր և լայնահատակ։ Այդ կճուճների վրա նկարված են ցանցեր, խաչվող գծեր, սանրաձև զարդեր և այլն։ Ինչպես Լճաշենի № 6 կուրգանում, այնպես էլ այս դամբարանում չեն եղել ոչ մարդկային ոսկրներ և ոչ էլ մետաղե իրեր, զենքեր, գործիքներ, զարդեր և այլն։

Նկ. 6

---

[3] Дело Археологической комиссии. № 140. 1896.

Համանման կերամիկայի բեկորներ գտնվել են նաև բնակատեղիների պեղումներից, որոնք այս կուլտուրան թվագրելու համար մեծ նշանակություն ունեն։ Այդպիսի բնակատեղիներից է Հայաստանում՝ Մուխաննաթ-Թափան և Գառնին, իսկ Ադրբեջանում՝ Ուզերլիկ-Թեփեն և Քյուլ-Թեփեն։

Գունազարդ կերամիկան Հայաստանում բնակատեղիի պեղումներից առաջին անգամ հայտնաբերվել է Մուխաննաթ-Թափայում, 1935-37 թթ. Ե. Բայբուրթյանի պեղումների ժամանակ[4]։

Մուխաննաթ-Թափան գտնվում է Երևանի հարավային մասում՝ երկաթուղային կայարանից 300 մետր հեռավորության վրա։ Բերդը գտնվում է թեթև զառիվայր ունեցող և բոլոր կողմերից մատչելի բլուրի վրա, որի գագաթը տափակ է, իսկ հիմքի մոտ էլիպսաձև է դառնում։

Ըստ Ե. Բայբուրթյանի տվյալների, պեղումները երևան են հանել երեք կուլտուրական շերտ։ Ստորին շերտը տվել է գունազարդ կերամիկա միջինը՝ ուրարտական շրջանի սև կերամիկա, և վերին շերտը՝ անտիկ շրջանի[5]։

Առաջին շերտում գտնված կերամիկայի կավը բաց վարդագույն է, լավ մշակված և լավ թրծած, արտաքինից ծածկված է կարմիր անգոբով, որի վրա սև ներկով արված են երկրաչափական միագույն զարդանախշեր։

Մուխաննաթ-Թափայի գունազարդ խեցեղենի համար սիրված մոտիվներ են, ինչպես պարույրները (սպիրալները), այնպես էլ ցանցերը, ալիքաձև և ուղիղ գծերը, անկյունները, զիգզագները և եռանկյունիները, որոնք իրենց կրկնօրինակներն ունեն ինչպես Հայաստանի տարբեր վայրերից գտնված գունազարդ ամանների զարդանախշերում, այնպես էլ Վրաստանում, Ադրբեջանում։ Բացի այդ կրկնում են Բողազ-Քյոյի պեղումներից հայտնաբերված գունազարդ կերամիկայի զարդանախշերը[6], սրանով ևս հաստատելով այս կուլտուրայի մ. թ. ա. 2-րդ հազ. կեսերին պատկանելը։

Մուխաննաթ-Թափայում գտնված գունազարդ խեցեղենի զարդանախշերում մեծ տեղ են գրավում նաև քառագիծ ռոմբերը։ Այս զարդանախշով մոտ 15 բեկոր է գտնված, որոնց մեջ կան թասի շուրթի մաս, կճուճի վզի մասեր, իրանի ուռուցիկ մասի կտորներ և այլն։ Այստեղ կրկնվում են ոչ միայն քառագիծ ռոմբերով զարդանախշը մեկ կամ երկու շարքով (օրինակ՝ 1439/392, 1216/9, 1439/399, 303, 300, 1216/29 և այլն), այլ լճաշենի զարդանախշերի ամբողջ կոմպոզիցիան (օրինակ՝ 1439/299, 316)։

Որպես բնակավայրային կուլտուրա, բացառիկ նշանակություն ունի նաև Գառնիի ամրոցի պեղումներից հայտնաբերված գունազարդ կերամիկան։

Ամրոցը կառուցված է բարձր, եռանկյունաձև հրվանդանի վրա, որը գտնվում է Գառնի գյուղի հարավ-արևմտյան մասում։ Այն հյուսիսային և արևելյան կողմից պաշտպանված է պարիսպով, իսկ մյուս կողմերից խորը ձորով և անմատչելի է։ Ամրոցն ունի մի շարք կուլտուրական շերտեր, սկսած էնեոլիթից՝ վերջացրած ուշ միջնադարով։

---

[4] Ե. Բայբուրթյան, «Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը», ՀՍՍՀ Պատմության և Գրականության ինստիտուտի տեղեկագիր, գիրք 2-րդ, Երևան, 1937, էջ 268

[5] Նույն տեղում, էջ 278։

[6] Проф. А. А. Захаров, „Хетская керамика из Богаз-Кёя и некоторые закавказские параллели", Издание О-ва обследования и изучения Азербайджана. Баку, 1927.

Գունավորված կերամիկան հայտնաբերվել է 1950—57 թվականների պեղումների ժամանակ։ Այն գտնվել է մեծ մասամբ ամրոցի հյուսիսային և արևելյան կողմերում, պարիսպի հիմքերի մոտ, երեք մետր խորության վրա, այսինքն հատկապես այն մասում, որտեղ շերտը մյուս տեղերի համեմատ ավելի շատ է խորացվել։

Գառնիում գտնված գունավորված կերամիկայի բեկորները նույնպես բաց վարդագույն խեցի ունեն, արտաքինից պատած են կարմիր անգորով և վրայից սև ներկով նկարված տարբեր տեսակի զարդանախշեր, ինչպես կենդանակերպ, այնպես էլ տարբեր տեսակի երկրաչափական զարդանախշեր, անկյուններ, սպիրալներ, ծծավարդեր, ցանցեր, հորիզոնական գիծեր և այլն։ Գառնիի խեցեղենի կրկնօրինակները մենք տեսնում ենք ոչ միայն Անդրկովկասում, այլև Բողազ-Քոյում գտնված գունավորված խեցեղենում[7]։

Նկ. 7

Սակայն ժամանակաշրջանը բնորոշելու համար բացառիկ մեծ նշանակություն ունի 1957 թվականի Գառնիում գտնված մանր և խոշոր եղջերավոր անասունների պատկերներով գունավորված խեցիների բեկորները (նկ. 7 և 8)։

Կարմիր անգորով պատած խեցիներից մեկի վրա սև ներկով նկարված են երկարականջ, բարակ և երկար վզով և երկար պոչով կենդանիներ՝ հանգստանալիս։ Նրանք նստած են շատ բնական վիճակում, մեջք-մեջքի տված, ոտքերը տակը ծալած։ Գլուխները ետ են դարձրել, բերանը բացել։ Սրանք հավանաբար խոշոր եղջերավոր անասուններ են, բայց տեսակը որոշելը դժվար է, քանի որ ոճավորված են։ Խեցու վրա կենդանիներից մեկի նկարն ամբողջությամբ է պահպանվել, երկրորդի մեջքը և պոչը, իսկ 3-րդի երկար վիզը և գլուխը (նկ. 7).

Նկ. 8.

Մի այլ խեցու բեկորի վրա, գլիքաձև նախշից ցած պահպանվել է կենդանու երկար պոչը, սրա կողքին նկարված է մի կենդանի, շորս կարճ և բարակ ոտքերով, կարճ պոչով, որն այնքան որոշակի չէ և կարելի է նմանեցնել կա՛մ ոչխարի, կա՛մ խոզի (նկ. 8)։ Նրանցից ցած նկարված է մի ինչ որ կենդանի, որի գլուխն է պահպանվել երկար դնչով և մարմնի մի փոքր մասը՝ պոչի կտորով։

Կենդանիների նկարներով գունավորված խեցեղենի հանդես գալը մ. թ. ա 2-րդ հազարամյակի կեսերին պատահականություն

[7] Проф. А. А. Захаров, „Хетская керамика из Богаз-Кёя и некоторые Закавказские параллели", О-во обследования и изучения Азербайджана, Баку, 1927.

չէ։ Սա մի ժամանակաշրջան է, երբ անասնապահության զարգացումը մեծ չափերի է հասնում։ Անասուններն այնքան են շատանում, որ երկրագործությունն այլևս չի բավարարում նրանց կերի պահանջը և ստիպված անասուններին քշում են սարերն արոտի, որի շնորհիվ մեծ զարգացում է ստանում բուշվոր անասնապահությունը։ Անասուններով հարուստ ցեղերի մոտ սկսվում է հարստության կուտակում։ Այսպիսով, անասնապահության աճի կողքին սկսվում է ցեղերի աստիճանական գույքային դիֆերենցիացիա։

Անասունների դերը չափազանց մեծ է այս ժամանակաշրջանի համար և բնականաբար կենդանիներն իրենց արտացոլումը պետք է գտնեին նախնադարյան մարդու կուլտուրայի և արվեստի մեջ ևս։

Խոշոր եղջերավոր անասունների նկարներով զունազարդ խեցեղեններ գտնվել են նաև հարավային Թուրքմենիայում, Կարա-Թեփեի բլուրի պեղումների ժամանակ, Կենտրոնական Իրանում, Խուզիստում, Հարավային Բելուջիստանում, Սուզում և այլուր[9]։

Վերը նշված զարդանախշից բացի, Գառնիում հայտնաբերվել են նաև քառագիծ ռոմբերով զարդանախշեր։

Լճաշենի հատկապես № 1 կարասի զարդանախշի կրկնօրինակ կարելի է համարել 1957թ. Գառնիում գտնված կավամանի մի բեկորը, որը կճուճի վզի հիմքի մասն է՝ դեպի ներս ճկված։ Վրան գծված են չորս հորիզոնական ալիքաձև գծեր, որոնցից սկիզբ են առնում քառագիծ ռոմբերը։

Անդրկովկասում զունազարդ կերամիկայի բնակատեղիների առաջիններից մեկն էլ Ուզելիկ-Թեփեն է (որը մոտավորապես 10 մ բարձրություն ունի)։

Ուզելիկ-Թեփեն գտնվում է Ադրբեջանում, Միլի տափաստանում, Ագդամ քաղաքի արևելյան ծայրամասում։ Ըստ Քուշնարյովայի տվյալների՝ չնայած շինարարական մնացորդների լավ հետազոտման հիման վրա Ուզերլիկ-Թեփեն երեք շերտի է բաժանվում, այնուամենայնիվ այս բնակավայրն ամբողջությամբ բնորոշում է մի պատմական էպոխա և հնագիտական նյութն էլ, հատկապես կերամիկան, մի միասնական կոմպլեքս է ներկայացնում, չնայած ունի մի շարք առանձնահատկություններ՝ կախված շերտի շատ կամ քիչ հնությունից։

Զունազարդ կերամիկան հանդիպում է բնակավայրի վերին երկու շերտերում՝ 2-րդ և 3-րդ, բայց մեծ քանակությամբ հատկապես 2-րդ շերտում։ Այս կավամաններն անկանթ են, ուժեղ փշած իրանով և լայն հետ ծալված պսակով— ինչպես Լճաշենի զունազարդ կճուճները։ Արտաքինից ծածկված են կարմիր անգորով և զարդանկարված սև ներկով, որոնց մեջ աչքի են ընկնում քառագիծ ռոմբերի զարդանախշերը։ Ուզերլիկ-Թեփեի բոլոր երեք շերտերում էլ գտնվել են հասարակ, վատ թրծած, խոհանոցային կերամիկա[10]։

Զունազարդ կերամիկան բնորոշ է հատկապես 2-րդ շերտին և թվագրվում է մ. թ. ա. 2-րդ հազ. կեսերով, ունենալով մի շարք անալոգիաներ Թրիալեթի, Կիրովականի, Զուրնաբադի մ. թ. ա. 2-րդ հազ. կեսերի կուլտուրաների հետ[10]։

---

[9] И. Н. Хлопин, „Изображение коровы на сосуде из Кара-Депе", Краткие сообщения ИИМК, № 69, м. 1957, стр. 136—138.

[9] К. Х. Кушнарева, „Раскопки на холме Узерлик-Тене около Агдама", Краткие сообщения ИИМК, вып 69, 1957, стр. 150.

[10] Նույն տեղում, էջ 135.

Նկ. 9.

Նկ. 10.

Այն մի շարք օրինակներով կրկնում է նաև Լճաշենի գունազարդ կերամիկան։ Այդ բանն ապացուցում է նաև բնակատեղիում գունազարդ կերամիկայի հետ հասարակ, խոհանոցային կերամիկայի առկայության փաստը։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Լճաշենի կուրգանում գտնված հասարակ, գորշագույն, խոհանոցային կերամիկան (նկ. 9, 10)։

Գորշագույն կավամանները կոպիտ են, ձեռքով պատրաստված, ծանր, վատ թրծած և թայթայված։ Կավը շատ անորակ է, ավազի մեծ հատիկներով և կոշտերով լի, ուստի վատ մաղված և վատ հունցած, հեշտությամբ փշրվում և

թափվում է։ Ձևով իրարից տարբերվում են և կարելի է հետևյալ տեսակների բաժանել.

1. Կճուճներ միջին մեծությամբ, ուռուցիկ փորով, դեպի դուրս լայնացող շուրթերով, անզարդ։

2. Քրեզաններ խորը, անզարդ։

3. Կճուճ ձգված իրանով, նեղ բերան, փորագիր զարդախազերով։

4. Պնակ փոքր, ադամանի տիպի։

Միջին մեծության լայնափոր կճուճները (№ 7, 8, 9, 10) իրենց ձևով որոշ չափով հիշեցնում են Էլարի վաղ բրոնզի էպոխայի դամբարաններից գտնված կճուճներին (1805/1—7)։ Էլարի կճուճների նման լայնափոր են, նույնատիպ լայնացող շուրթերով, կարճ վզով։ Էլարի կճուճները պատրաստված են լավ հունցած, մաղված և լավ թրծած բաց շագանակագույն կավից, իսկ Լճաշենինը՝ գորշագույն են, անորակ, պրիմիտիվ և կարծես վերջինիս վերապրումը լինեն։

Պրիմիտիվ զարդախազերով գորշագույն № 14 կճուճին նման են Թրիալեթի 7-րդ կուրգանի գորշագույն կավամանի բեկորները։ Սրանք համարյա նույն փորագիր զարդախազերն ունեն և նույն տեխնիկայով են կատարված, ինչ որ Լճաշենի կճուճը։ Վերջինիս նման վզին ունի կարճ գծիկներով հատվող երկու համակենտրոն փորագիր հորիզոնական գծեր, որոնք համախմբված են գաբաթները ցած եռանկյունիների մեջ։ Սակայն Լճաշենի զարդախազերը ավելի պրիմիտիվ են արված։

Լճաշենի գորշագույն, խոհանոցային հասարակ կերամիկան գույնով, որակով, փորագիր զարդախազերի կատարման տեխնիկայով մեծ նմանություն ունի Բ. Ա. Կուֆտինի նկարագրած Թրիալեթի վաղ բրոնզի կուրգանային կուլտուրայի միջին և ուշ էտապի կերամիկայի 3-րդ խմբի հետ[11]։

Կուֆտինը կերամիկայի այս 3-րդ խումբը բոլորովին անջատում է կարմիր խեցիով լավ թրծած, կարմիր ֆոնի վրա սև զարդանախշերով կավամաններից, ինչպես և 2-րդ խմբի սպիտակ կավով անգորած և սև կամ գորշագույն զարդանախշերով կավամաններից և գտնում, որ սովորաբար սրանք միասին հանդես չեն գալիս և բոլորովին ինքնուրույն են[12]։ Բացի այդ գորշագույն կավամաններն աշխատում է կապել կուրգանի կառուցվածքի հետ, նրանք վերապրելով փոս չունեցող կուրգաններին։ Այս 3-րդ խումբը նա համարում է կուրգանային կավամանների վերջին էտապը, կերամիկայի զարդանկարի հետ զարգացումով[13]։

Սակայն, ինչպես տեսնում ենք, Կուֆտինի բաժանումով առաջին և 3-րդ խմբերի կերամիկան Լճաշենում համատեղ են հանդես գալիս և նրանց միմյանցից անջատել հնարավոր չէ։ Բացի այդ, ինչպես վերը տեսանք, Ուզերլիկի-Թեփեում ևս գունազարդ կերամիկան ուղեկցվում է գորշագույն խոհանոցային կերամիկայով։

Պատահական չէ և այն, որ Լճաշենում գունազարդ կավամաններից մեկը (№ 2) պատրաստված է նույն գորշագույն անորակ կավից։ Սա գունազարդ մո-

---

[11] Б. А. Куфтин, „Археологические раскопки в Триалети", 1911. Тбилиси, стр. 85, 405.

[12] Նույն տեղում, էջ 84։

[13] Նույն տեղում, էջ 86։

նոխորում կերամիկայի մեջ առաջին դեպքն է և խոսում է այն մասին, որ գունազարդ կերամիկայի առաջին խմբին պատկանող կերամիկայի խեցին ոչ միայն կարող է լինել վարդագույն, այլև գորշագույն կավից։

Այսպիսով, Լճաշենի կուրգանի կերամիկան բացասում է այդ խմբերի անջատվածությունը, ապացուցում նրանց համատեղ լինելը և նույն ժամանակին պատկանելը։

Մեծ հետաքրքրություն է առաջացնում և նրբախեցի, երկկանթանի բիկոնաձև փարչը։ Այն չափազանց յուրօրինակ է և գունազարդ կերամիկայի հետ Հայաստանում առաջին անգամ է հանդես գալիս։ Կանթերն սկսվում են գոտկատեղում և ավարտվում շուրթից մի փոքր վեր բարձրանալով։ Բերանը շատ նուրբ է, ունի ուղղահայաց կանգնած պատեր, առանց գոտու, որը դեպի դուրս մի թեթև լայնանում է։ Կանթերի կողմից բերանը սեղմված է, որի հետևանքով էլիպսի ձև է ստանում։ Պատրաստված է լավ մշակված սև կավից։ Ունի հարթ ողորկ մակերես, որի վրա փայլեցման միջոցով զարդանախշեր են արված շուրթից մինչև սուր հատվող գոտկատեղը։ Վրայի զարդանախշերը սկսվում են շուրթի տակ չորս սև փայլուն համակենտրոն հորիզոնական գծերով, որին հաջորդում են չորս համակենտրոն ալիքներ, ապա գծված են կրկին չորս հորիզոնական գծեր, որոնցից սկիզբ են առնում եռանկյունաձև գծերի խմբերը, յուրաքանչյուր 10 գծից բաղկացած։ Զարդանախշերն արված են չափազանց նուրբ, կանոնավոր, բայց մեծ մասամբ ջնջված են, չեն երևում (նկ. 11)։ Իր թե ձևով և թե զարդանախշերով և նրանց կատարման տեխնիկայով կապվում է էնեոլիթյան կուլտուրայի հետ։ Լճաշենի փարչը կարելի է համեմատել Դվինում գտնված էնեոլիթյան սև փայլեցրած բիկոնաձև մեկ կանթանի փարչի հետ, որն իր վրա ունի ուռուցիկ բշտիկ և փորագիր զարդանախշեր (Պետ. պատմ. թանգ., ինվ. 1917/287)։ Լճաշենի փարչի տեխնիկայով զարդանախշեր մենք տեսնում ենք Մուխաննաթ-Թափայի, Թագավորանիստի, Շենգավթի, էնեոլիթյան կերամիկայի բեկորների վրա, որոնց վրա պատկերված են ալիքներ, հորիզոնական և եռանկյունաձև գծեր, ցանցեր և այլն։ Սակայն, բիկոնաձև կավամանների տեսակները և փայլեցման եղանակով զարդանախշեր ստանալու տեխնիկան ավելի շատ տարածված է ուշ բրոնզի էպոխայում։ Մենք բազմաթիվ օրինակներ ունենք ինչպես Նոր Բայազետի, այնպես էլ Գոլովինոյի, Աթարբեկյանի, Բասարգեչարի, Աստղաձորի կոլեկցիաներում։

Նկ. 11.

Այսպիսով, բիկոնաձև փարչի և զարդանախշերի ձևերը և ստացման տեխնիկան սկիզբ առնելով դեռևս էնեոլիթում՝ միջին բրոնզի էպոխայում, պահպանվում են, սակայն մեծ զարգացում և տարածում են ստանում ուշ բրոնզի էպոխայում։

Ինչ վերաբերում է Լճաշենի կուրգանի կառուցվածքին և թաղման սովորույթին, պետք է ասել, որ այն կրկնում է 2-րդ հազարամյակի կեսերին Անդրկովկասի կուրգանների պատկերը։

Ինչպես Լճաշենում, այնպես էլ Թաղաբենդի, Կիրովականի, Թրիալեթի կուրգաններում թաղումը կատարվել է հողի կտրվածքի մեջ, քառանկյունաձև փոսում առանց քարե պատերի։ Երբեմն կուրգանն ունեցել է փայտե ծածկ (Կիրովական)[14], երբեմն էլ ինչպես Լճաշենում, Թաղաբենդում՝ փայտե ծածկ չի եղել, և դամբարանը լրիվ հողով լցնելուց հետո, վրան ոչ շատ մեծ քարեր են դրել։

Լճաշենի կուրգանում մարդկային ոսկրների բացակայությունը ոչ պատահականություն է և ոչ էլ եզակի երևույթ։ Նույնը մենք տեսնում ենք վաղ բրոնզի էպոխայի գունազարդ կերամիկայով կուրգաններում՝ ինչպես Թաղաբենդի, Կիրովականի և Թրիալեթի։ Հետևաբար սխալ կլիներ մարդկային ոսկրների բացակայությունը համարել կամ փտելու հետևանք (քանի որ կենդանիների ոսկորները շատ լավ են պահպանված), կամ կենդանիների կուլտային թաղման ապացույց։ Ամենայն հավանականությամբ այստեղ մենք գործ ունենք դիակիզման հետ, որը նույն ժամանակաշրջանում շատ տարածված էր և Թրիալեթում և հեթիթների մոտ՝ (խատուշաշում թագավորների դիակիզումը)[15]։

Դիակիզումը կատարվել է դամբարանից դուրս, որից հետո մոխիրը կամ ցանել են դամբարանի հատակին, կամ դամբարանում դրված հատուկ պատ-

Լճաշենի № 6 կուրգանի կավամանների չափերը սանտիմետրերով

№ p/k	Իրի անունը, գույնը	Բարձրությունը	Տրամագծերը				Վզի բացվածքը
			Բերանի	Հատակի	Իրանի	Վզի	
1	Կարաս գունազարդ	50	—	22	47	—	5
2	Կճուճ մեծ գունազարդ	35	31	—	40	31.5	5.5
3	» » »	35	22.5	19.2	39	22	2.5
4	» » »	33	21.5	19	40	21	—
5	Կճուճ լայնաբերան գունազարդ	24.2	20.5	16	29	20	3.5
6	Գրեղան խորը »	14.5	17.5	11.5	22	18	—
7	Կճուճ միջին մեծության գորշագույն	21	12.5	9.5	22	11	4
8	» » » »	20	12.5	8.5	24	12	3.5
9	» » » »	24	12.5	8.5	22	12	3.5
10	» » » »	17	11	8	17	10	3
11	Գրեղան գորշագույն	20	19.5	12	27	—	—
12	» »	16	19	14	24	—	—
13	Պնակ շատ փոքր, ադամանի տիպի	4.5	4.5—5	6	—	—	—
14	Կճուճ ձգված իրավ զարդախաղերով	32	15	12.5	30	—	—
15	Փարչ, երկկանթանի նրբախեցի, սև	12.5	9.11	7	16	—	—

[14] Дневник Б. Е. Пиотровского.

[15] Otten Heinrich. Ein Bestatungritual hetitischer Konige Zeitschrif. Ass № F, BD XII (XLXI), Berlin, 1840, стр. 221—224.

պարակի վրա[16], կամ էլ դամբարան դրել՝ հատուկ աճյունասափորով։ Լճաշենում որպես աճյունասափոր հավանարար ծառայել է նրբագեղ, երկկանթանի փարշը։

Սխալ կլիներ նաև եզների դանդերի առկայությունը և դասավորության ձևը ևս վերագրել կենդանիների կուլտային թաղման։ Այն փաստորեն կապվում է նույն ժամանակաշրջանի թաղման սովորությունների հետ։ Նույն պատկերը մենք տեսնում ենք ինչպես Կիրովականում, այնպես էլ Թրիալեթում։ Կիրովականում ևս Լճաշենի նման, երկու եզան գլուխները ոտքերի վերջավորություններով դրված է եղել դամբարանի արևելյան պատի երկու անկյուններում[17]։ Ամենայն հավանականությամբ եզները մորթելուց հետո, մսի մի մասը հանգուցյալի հարազատները օգտագործել են հոգեհանգստի սեղանի համար, իսկ մյուս մասը դրել հանգուցյալի հետ, որի համար որպես ապացույց կարող են ծառայել եզան կողոսկրները, որոնք ջարդված վիճակում դրել են դամբարանի տարբեր մասերում։ Հանգուցյալի հետ դրել են և մի ամբողջ այծ։

Ինչ վերաբերում է եզների գանգերի և ոտքերի վերջավորություններին, դրված դամբարանի արևելյան պատի տակ, երկու անկյուններում՝ դեմքերով դեպի արևելք, ապա ինչպես Կիրովականում[18], Թրիալեթում[19], այնպես էլ Լճաշենում կուրգանում դրել են մորթված եզների մաշկերը, որոնց մեջ թողել են միայն գանգը և ոտքերի վերջավորությունները։ Սրանք հավանարար փոխարինել են այն եզներին, որոնք հանգուցյալին կուրգան բերելուց հետո պետք է ուղեկցեին հանդերձյալ աշխարհում։ Նույն սովորությունը պահպանվել է և ուշ բրոնզի էպոխայում։ Ինչպես Մարտունու շրջանի ներքին Գետաշեն գյուղում, այնպես էլ Լճաշենի ուշ բրոնզի էպոխայի կուրգաններում հանգուցյալին թաղել են եզներով լծված սայլերի հետ։

Լճաշենի № 6 կուրգանը համեմատելով Կիրովականի, Թրիալեթի հարուստ-կուրգանների հետ, չենք կարող նրան շատ հարուստ ցեղապետի վերագրել, որովհետև, ինչպես վերը նշեցինք, կուրգանում բացի կավամաններից, օբսիդյարե փոքր նուկլեուսից և քերծից, ոչինչ չգտնվեց։

Ամփոփելով նյութը, կարելի է ասել, որ վերը նշած փաստերը խոսում են այն մասին, որ Լճաշենի կուրգանը վերաբերում է վաղ բրոնզի շրջանի մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսերին։

---

[16] Б. Б. Пиотровский, „Археология Закавказья", Л., 1949, стр. 47.

[17] Дневник Б. Б. Пиотровского.

[18] Նույն տեղում։

[19] Б. А. Куфтин, „Археологические раскопки в Триалети", Тбилиси, 1941, стр. 81.